

1.2.4. Տրանսպորտ

Ավտոմոբիլային տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2012թ. հունվար-հունիսին, ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված վիճակագրական հաշվետվությունների տվյալների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 198.9 հազ. տոննա, որը 2011թ. հունվար-հունիսի նկատմամբ աճել է 6.1 տոկոսով:

Բեռնաշրջանառություն: Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը 2012թ. հունվար-հունիսին կազմել է 11610.8 հազ. տոննա-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 8.4 տոկոսով:

Ուղևորափոխադրումներ: 2012թ. հունվար-հունիսին հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 10451.7 հազ. մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 9664.6 հազ. մարդու դիմաց:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը ըստ շրջանների, 2011-2012թթ. հունվար – հունիսին


	2011թ. հունվար-հունիսին	2012թ. հունվար-հունիսին	Աճի տեմպը, տոկոսներով
Ընդամենը	9664.6	10451.7	108.1
ք.Ստեփանակերտ	8799.5	9440.2	107.3
Ասկերան	406.7	495.9	121.9
Հադրութ	44.8	51.6	115.2
Մարտակերտ	89.2	98.6	110.5
Մարտունի	96.2	120.6	125.4
Շահումյան	0.5	0.7	140.0
Շուշի	220.8	234.6	106.3
Քաշաթաղ	6.9	9.5	137.7

Ուղևորաշրջանառություն: Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը 2012թ. հունվար-հունիսին կազմել է 69815.3 հազ. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 6.2 տոկոսով:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2011-2012թթ. հունվար-հունիսին

	2011թ. հունվար-հունիսին	2012թ. հունվար-հունիսին	Աճի տեմպը, տոկոսներով
Ընդամենը	65721.1	69815.3	106.2
ք.Ստեփանակերտ	50896.2	53351.8	104.8
Ասկերան	4085.2	4620.8	113.1
Հադրութ	2306.4	2580.0	111.9
Մարտակերտ	3012.1	3185.4	105.8
Մարտունի	3200.6	3618,0	113.0
Շահումյան	80.9	81.1	100.2
Շուշի	1513.2	1665.7	110.1
Քաշաթաղ	626.5	712.5	113.7

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2012թ. հունվար-հունիսին



Խողովակային տրանսպորտ: 2012թ. հունվար-հունիսին խողովակային տրանսպորտով հանրապետությունում ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 16030.5 տոննա՝ 2011թ. հունվար-հունիսի 14432.6 տոննայի դիմաց:

Ճանապարհատրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2012թ. հունվար-հունիսին, ըստ ԼԳՀ կառավարությանն առընթեր ԼԳՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տվյալների, ինչպես և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ արձանագրվել է շարժակազմի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների 20 դեպք:

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով 2012թ. հունվար-հունիսին վիրավորվել է 32 և զոհվել՝ 2 մարդ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների և տուժվածների թիվը, 2012թ. հունվար - հունիսին

	Պատահարների քանակը, միավոր		Տուժվել են, մարդ			
			զոհվել են		վիրավորվել են	
	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով	Ընդամենը	այդ թվում՝ հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով
Ընդամենը պատահարներ	20	4	2	1	32	6
<i>այդ թվում՝ ըստ տրանսպորտային միջոցների տեսակների</i>						
Բեռնատար ավտոմեքենաներ	2	1	-	-	3	1
Ավտոբուսներ	1	-	-	-	4	-
Թեթև մարդատար մեքենաներ	17	3	2	1	25	5
Մոտոցիկլետներ	-	-	-	-	-	-
Չբացահայտված պատահարներ	-	-	-	-	-	-

Ճանապարհատրանսպորտային պատահարների մեծամասնությունը տեղի է ունեցել Ստեփանակերտ քաղաքում՝ 40.0 տոկոսը կամ 8 պատահար, որոնց հետևանքով զոհվել է 1 մարդ և վիրավորվել՝ 10-ը:

Ճանապարհատրանսպորտային պատահարներն ըստ շրջանների, 2011-2012թթ. հունվար- հունիսին

	2011թ. հունվար- հունիսին			2012թ. հունվար- հունիսին		
	Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ		Պատահարների քանակը, միավոր	Տուժվել են, մարդ	
		զոհվել են	վիրավորվել են		զոհվել են	վիրավորվել են
Ընդամենը	20	1	31	20	2	32
ք.Ստեփանակերտ	6	-	11	8	1	10
Ասկերան	5	-	7	4	-	6
Հաղրուք	-	-	-	1	-	1
Մարտակերտ	2	-	3	2	-	6
Մարտունի	2	-	4	1	-	1
Շահումյան	1	-	1	1	-	4
Շուշի	4	1	5	1	-	2
Քաշաթաղ	-	-	-	2	1	2

Ճանապարհատրանսպորտային պատահարները և տուժվածներն ըստ կատարված պատահարի վայրի և տեսակի, 2012թ. հունվար- հունիսին

	Պատահարների քանակը, միավոր	տուժվել են, մարդ	
		զոհվել են	վիրավորվել են
<i>ըստ կատարված պատահարի վայրի</i>	քաղաքներում և բնակավայրերում	9	11
	ավտոճանապարհներին	10	20
	այլ տեղերում	1	1
<i>ըստ տեսակի</i>	բախում	5	6
	շրջում	8	17
	խոչընդոտի վրաերթ	4	5
	հետիոտնի վրաերթ	2	2
	կանգ.տրանսպ. վրաերթ	1	2